

ԱՐԹՅՈՒՐ ԱՂԱՄՈՎԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ԱՆՆԱ ԲՈՒԴԱԳՅԱՆԻՆ

Հրատարակում ենք Երևանի Գրականության և արվեստի թանգարանում պահվող ֆրանսաբնակ հայ բեմադրիչ և դերասանուհի Աննա Բուդադյանի ֆունդից երեք նամակ, որոնք նա ստացել է հայազգի ֆրանսագիր նշանավոր թատերագիր Արթուր Ադամովից, 1950 թվականին:

Արթուր Ադամովը (Հարություն Ադամյան) ծնվել է 1908-ի օգոստոսի 23-ին, Կիսլովոդսկում: Ծնողները եղել են շուշեցիներ (նավթարդյունաբերող Սուրեն Ադամյան և Լուլա Բահաթուրովա): Մայրական տատը՝ Եկատերինա Բահաթուրը (1870–1944), եղել է թատերագիր, հայ թատրոնում բեմադրվել են նրա «Արտավազը», «Պիվան» և այլ դրամաները: Կա տեղեկություն, որ Ադամովը հեռու ազգակցություն է ունեցել նաև հայազգի ֆրանսագիր նշանավոր գրող Անրի Տրուայայի հետ: 1914-ից Ադամյանները որդու՝ Հարությունի (որին Արտյուշա են անվանել) և դստեր՝ Արմիկի հետ տեղափոխվել են ժնև: Այստեղ էլ Հարություն-Արթուրը ստացել է նախնական կրթությունը: Որոշ ժամանակ էլ ուսանել է Գերմանիայի Մայնք քաղաքի ֆրանսիական լիցեյում: 1924-ին Ադամյանների ընտանիքը վերջնականապես հաստատվել է Փարիզում: Ադամյաններն ապրել են տարագրության բոլոր զրկանքները: Ավետիք Իսահակյանը 1926-ին Փարիզից գրած երկու նամակում հետևյալն է ասել ռուսահայ վտարանդիների, այդ թվում՝ Սուրեն Ադամյանի ընտանիքի մասին. «Բոլորի կանայք կար են անում. Ասրի-Բեկյանի, Սուրենի, Նոյնիսկ իշխ. Արդուբյանի», ու նաև՝ «Սուրեն Ադամյանի կինը կարում է»:

Արթուր Ադամովը համալսարանական կրթությունն ստացել է Փարիզում: Հավասարապես տիրապետել է ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներին: 1942-ին ֆաշիստները նրան ձերբակալել են և որպես քաղաքական բանտարկյալ ուղարկել Կադոյի ճամբարը (Լվիժր): Ադամովը փախել է ճամբարից և պատասխարկվել անգլիացի բողոքականների մի ընկերությունում:

Գրականութեամբ զբաղվել է վաղ մանկուց, գրել վերացական բանաստեղծություններ: 1920-ականների վերջին հարելով սյուրռեալիզմին՝ բարեկամացել է Պոլ Էլյուարի հետ: Ինչպես գրել է Լևոն Ներսիսյանը, «Գրականություն մտավ սյուրռեալիստի մոդայիկ կերպարանքով, փորձեց «մաքուր» արվեստով պատասխարկել արգահատելի իրականությունից, ապրեց Ֆրանսիայի ամոթալի պարտությունը և համակենտրոնացման ճամբարից դուրս եկավ ուսերից արդեն թոթափած լինելով բոլոր «ինտելիգենտական» պատրանքները»: Հետագայում Ադամովը անցնելով թատերագրության՝ դառնում է արքունի թատրոնի պարագլուխներից (Սեմյուել Բեքեթի և Էժեն Իոնեսկոյի հետ միասին): Առաջին տպագրված գործերն են «Սոսկալի օրագիրը» (1943) և «Խոստովանություն» (1945) ինքնակենսագրական վիպակը:

Ադամովի թատերախաղերից են՝ «Պարողիա» (1947), «Ներխուժում» (1949), «Մեծ և փոքր զորախաղեր» (1950), «Խնդկատակերգությունը», «Պրոֆեսոր Տա-

րանը» (1951, հայերեն լույս է տեսել «XX դարի արտասահմանյան դրամատուրգիա» ժողովածուում), «Բոլորը բոլորի դեմ» (1953), «Մեծ և փոքր զորախաղ» (1953), «Շարժման իմաստը» (1955), «Պինգ-Պոնգ» (1955), «Պառլո-Պատլի» (1957), «Մտերմություն» (1957), «Ես ֆրանսիացի չեմ» (1958), «Ապաքաղաքականացվածները» (1958), «Յոթանասուննեկի գարունը»⁶ (1961), «Սրբազան եվրոպա», «Անացորդների քաղաքականությունը», «Չափից դուրս» պիեսները, որոնք բոլորն էլ լույս են տեսել «Գալիմար» հրատարակչության կողմից: Դրանք Ֆրանսիայից բացի բեմադրվել են նաև Անգլիայում, Իտալիայում, Չեխոսլովակիայում, Գերմանիայում, Յուգոսլավիայում, Հարավսլավիայում և այլուր: Որպես ծախսալացքների գրող՝ ստեղծագործել է առավելապես սոցիալական և հակաֆաշիստական բեմաներով: Պիեսի է վերածել Գոգոլի «Մեռած հոգիները», որը հրատարակվել է 1960-ին և բեմադրվել: Ռուսերենից ֆրանսերեն է թարգմանել Անտոն Չեխովի և Մաքսիմ Գորկու թատերախաղերը: Կազմել է «Փարիզյան կոմունա» ժողովածուն (1959), որ ընդգրկում է գեղարվեստական և քաղաքական տեքստեր: Եղել է Ֆրանսիայի գրողների ազգային հանձնախմբի անդամ:

Ադամովը չի տիրապետել հայոց լեզվին, սակայն հայ գրականության մասին մի փոքր գաղափար է ունեցել՝ շնորհիվ Վալերի Բյուտտովի՝ հայ պոեզիայից ռուսերեն կատարած թարգմանությունների: Սերտ թղթակցություն է ունեցել Շահան Շահնուրի հետ, գնահատել նրա ֆրանսերեն ստեղծագործությունները: «Նա լայն ըմբռումների տեր մի մեծ գրող է, ես հիանում եմ նրա ստեղծած գրականության խորության վրա», – ասել է Ադամովը⁷: Ծանոթ է եղել Վիլյամ Սարոյանի հետ, բարձր գնահատել նրա գրականությունը: 1967-ին երևանի «Սովետական արվեստ» ամսագրի թղթակից Նուբար Թիլոյանի հարցին, թե «Ի՞նչ գիտեք Հայաստանի, հայ արվեստի, նրա գործիչների մասին» նա պատասխանել է. «Բոլորովին անծանոթ եմ, դժբախտաբար, հայերեն չգիտեմ: Մեծ մայրս, որուն ծածկանունն էր Բահաթուր, գրած է շատ մը թատերախաղեր: Մի հատը միայն կը հիշեմ, որուն նյութն էր առասպելական Արտավազդը»⁸: Նրան հրավիրել են Խորհրդային Միություն, նաև՝ Հայաստան, սակայն հիվանդության պատճառով չի մեկնել: Հայաստանի ընթերցողների համար նա մակագրել է իր լուսանկարը. «Pour le journal Arvesd très amicalisme de la part d'un compatriote et d'un l'écrivain français. Et bien sure vive le socialisme international. Arthur Adamov» («Արվեստ» ամսագրին բարեկամաբար ֆրանսիացի գրող հայրենակցից: Եվ, անշուշտ, կեցցե միջազգային սոցիալիզմը»): Մի առիթով էլ նա ասել է. «Խորհրդային կարգերին ու Խորհրդային Հայաստանին հակառակելու համար մարդիկ պետք է հիմար լինեն ու տրամաբանելու անընդունակ, որ չկարողանան մտաբերել այն անվերջանալի կոտորածներն ու ջարդերը, որոնց ենթարկվում էր հայ ժողովուրդը իր սեփական հայրենիքում, և միայն Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումով կարելի եղավ վերջ տալ այդ՝ համաճարակ դարձած հայկական կոտորածներին»⁹:

Ավետիք Իսահակյանի որդին՝ Վիգեն Իսահակյանը հիշել է, որ Ադամովի հայրը՝ Սուրենը, Բաքվի հարուստ նավթարդյունաբերողներից էր, ռուսական հեղափոխության օրերին թողել էր Բաքվում իր ունեցվածքը և հանգրվանել ժնևում՝

սպասելով, թե ամեն ինչ կհանդարտվի, և ինքը կվերադառնա Բաքու՝ տեր կանգնելու հարստությանը։ Սակայն հուլիսը չեն իրականացել, և նա ինքնասպանություն է գործել։ «Մեր ծանոթության տարիներին Արթուրը միհար ու բարձրաստակ դպրոցական էր, ինձնից 4-5 տարով մեծ։ Նա նայում էր ինձ որպես երեխայի և իր այլևս ավելորդ խաղալիքներն ինձ էր նվիրում։ Նա գերազանց խոսում էր ֆրանսերեն ու ռուսերեն, սակայն հայերեն չգիտեր։ Կարողում էր ամբողջ օրը, ոտանավորներ էր գրում ֆրանսերեն, ցույց տալիս հորս՝ կարծիքն իմանալու։ Այդ գրվածքները հեռու էին հորս ճաշակից, սակայն Արթուրի մեջ նշմարում էր տաղանդի առկայությունը։ Ուստիև խորհուրդ տվեց դպրոցն ավարտելուց հետո գնալ Փարիզ՝ սովորելու և շարունակելու գրելը։ 15 տարի անց Արթուրին տեսա Փարիզում։ Նա արդեն ճանաչված գրող էր, որի պիեսները մեծ հաջողությամբ բեմադրվում էին Եվրոպայի թատրոններում։ Սակայն, չնայած գրական հաջողություններին և բարեկեցիկ վիճակին, Արթուրը չկարողացավ ազատվել հոռետես մտքերից և թմրեցուցիչ դեղերի ազդեցության ներքո, հետևելով հոր օրինակին, վերջ տվեց կյանքին։ Սա 60-ական թվականներին էր, լուրը ինձ հասավ Երևանում»⁹։

Աղանվաի հայ թղթակիցը՝ ֆրանսահայ թատրոնի ռեժիսոր և դերասանուհի, հասարակական և մշակութային գործիչ Աննա Բուդադյանը¹⁰ (1880, Շուշի – 1964, Փարիզ), այսօր մոռացված անուն է, մինչդեռ միանգամայն արժանի հիշվելու։ Նա հայ թատրոնի պատմության մեջ քչաթիվ կին ռեժիսորներից է։ Ուսանել է Շուշիի Մարիամյան ուսումնարանում, Պետերբուրգի Եկատերինյան գիմնազիայում և Լայպցիգի համալսարանի բժշկական ֆակուլտետում։ Շուշիում և Պետերբուրգում մասնակցել է աշակերտական ներկայացումների։ Ռուսաստանում ուսումնասիրել է ռուս և հայ հայտնի դերասանների խաղը, ճանապարհորդել Եվրոպական և ասիական երկրներում։ 1904-ին Բաքվում մտել է դերասանուհի Ազնիվ Գրաչյանի թատերախմբի մեջ։ Աչքի է ընկել Նորայի դերով՝ Իբսենի մեծանուն դրամայում, որտեղ նրա խաղընկերն է եղել Գովհաննես Աբեյանը։ 1908–1918 թվականներին խաղացել է «Բաքվի կուլտուրական միության» թատերական սեկցիայում լինելով սեկցիայի փոխնախագահը։ Տասը տարի Բաքվում բեմադրել է Սունդուկյանի, Պարոնյանի, Շանթի, Շեքսպիրի, Սենկևիչի, Գաուտամանի, Ջուդերմանի, Գամսուրի, Գոգոլի գործերը։ Աղբյուրներում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1920-ին, Բուդադյանը եղել է Բաքվի աղբյուրների թատրոնի՝ Բուհիաթ-Ձադեի անվան Արևելյան ստուդիայի հիմնադիրներից։ Այնուհետև մեկնել է Բեռլին, ապա՝ Փարիզ, որտեղ ամուսինը՝ Տիգրան Բուդադյանը, աշխատանքի է անցել խորհրդային առևտրական ներկայացուցչությունում որպես ինժեներ։ Այդպես նրանք ընդմիջտ մնացել են Ֆրանսիայում, որտեղ Աննան ունեցել է թատերական բեղուն գործունեություն։ 1924-ին կազմակերպել է «Մայրենի բեմ» թատերախումբը, բեմադրել Շանթի «Հին աստվածները», Շիրվանզադեի «Պանսիլի համար», «Նամուս», «Եվգինե», Դյումայի «Քին» և այլ ներկայացումները։ 1940-ականներին եղել է «Ֆրանսահայ ազգային թատերախմբի» ռեժիսորը։ 1945-ին ընտրվել է «Ազգային ճակատ» թատերական մասնաճյուղի նախագահ։ Սամակցեղ է հայ մշակույթի բոլոր մարզերի աշխատանքներին, սփյուռքահայ մամուլում տպագրել է հոր-

վածներ բատերական հարցերի շուրջ”:

Հայ բեմի մեծ ողբերգու Վահրամ Փափազյանն իր հուշերում նշել է, որ ինքը շատ բանով է պարտական Աճնա Բուդաղյանին Բաքվում հայ թատրոնում իր կատարած բեմական կյանքի սկզբնական քայլերի համար: Տարիներ անց 1932-ին, հանդիպելով նրան Փարիզում, Փափազյանը գրել է. «...Ինձ թվաց մի րուպե, թե դիմացս նստել էր ինքը ժողով Սանդը, թեև խոսում էր Շուշվա բարբառով: Նա իրեն մաշող էներգիայի համար ասպարեզ էր գտել փարիզահայ թատրոնի ներսում, նեցուկ ու պատիժ դերասանների շլնորած գլխին իր աղմկոտ միջամտութեամբ, մեկին խրախուսելով, մյուսին այպանելով, սովորեցնելու համար նրանց այն... ինչ չգիտեր: Դարձել էր բեմադրող, դերուսույց, տոմսավաճառ, ադմինիստրատոր... Բաքվի «Բարեգործական ընկերության» կարգերը հաստատելով Փարիզում:

Պատմեց անկրկնելի միամտութեամբ, թե առաջարկություն էր արել «Օդեոնի» վարչությանը Ստանիսլավսկու գաղափարները դասավանդել դերասաններին... Ֆրանսերենով, որը խոսում էր Աճնան նույնպես Շուշվա բարբառով: Եվ հիանալիս այն է, որ ապշած էր, ինչպես ասում էր, ֆրանսիական պետական թատրոնի վարչության մերժումից:

...անհնարին ոչինչ չկար Աճնայի համար. ոչինչ այնքան Շուշուց չէր, որքան ինքը. ուր որ կանգնում էր, այնտեղ Շուշին էր: Հաճախ եմ շրջագայել հետը Փարիզում. Լյուքսեմբուրգը, նրա համոզումով, Շուշվա ծաղկանոցն էր, Սորբոնը՝ Գյանջունցենց հիվանդանոցը: Բացի շուշեցուց գեղեցիկ տղամարդ չկար աշխարհում և չէր էլ եղել: Ապոլոնը ծնվել էր Շուշում, Արամազդն իր շանթերն արձակել էր Քերժի գլխից, իսկ Բուլոնյան անտառը՝ Բեխի աղբյուրն էր:

Մի՞թե հազմվել գիտեին Փարիզում... Թերզի Քուչարի նման մի դերձակ չուներ ամբողջ Ֆրանսիան, և ամենագեղեցիկ ֆրանսուհին անգամ Սառա-բաջու եղունգն իսկ չարժեր:

Դարձյալ սիրելի՛, սիրելի՛ Աճնա. եթե տողերս հասնեն քեզ երբևիցե, նրանք քեզ կանան, թե սիրելի խոխան... կարոտել է այնքան ու այնքան ջր աղմկոտ, բարի խնամքին, որի մշուշոտ հիշատակն անգամ բարերար անձրև է իր խոնջած սրտին»¹²:

Աճնա Բուդաղյանը, լինելով եռանդուն և դյուրին հաղորդակցվող անձնավորություն, կապեր է ստեղծել հայ և միջազգային բազմաթիվ նշանավոր անձանց հետ: Նա մտերիմ է եղել աշխահառչակ ամերիկյան ռեժիսոր Ռուբեն Մամուլյանի ծնողների՝ Չաքարիա և Վերթինե Մամուլյանների հետ: Դեռևս Կովկասում ապրած տարիներին ծանոթ է եղել ամերիկյան կինոյի ապագա խոշոր բնութագրական դերասան Ալիմ Թամիրովի հետ: Ի դեպ, Թամիրովը ցանկություն է ունեցել էկրանավորել որոշ նմուշներ հայ թատերագրությունից և այդ խնդրանքով դիմել է Բուդաղյանին. վերջինս նրան առաջարկել է Լևոն Շանթի «Հին աստվածները» և Եկատերինա Բահաթուրի «Արա և Շամիրամ» պիեսները¹³:

1963 թվականին Փարիզի հայերը հանդիսավորությամբ նշել են Աճնա Բուդաղյանի մշակութային գործունեության 50-ամյակը: Նա Հայաստանի գրականության և արվեստի թանգարանին է ուղարկել իր անձնական արխիվը, որ մեծարժեք շատ նյութեր է պարունակում հատկապես ֆրանսահայ թատրոնի վե-

րաբերյալ: Հազիվ ավարտած արխիվը կարգավորելու աշխատանքը նա հրաժեշտ է տվել կյանքին 84 տարեկան հասակում:

Նամակները հետաքրքրություն են ներկայացնում նախևառաջ այն առումով, որ բացահայտում են արսուրդի թատրոնի հիմնադիրներից մեկի կապերը մի հայ արվեստագետի հետ, քանի որ, ինչպես արդեն նշվեց, Ադամովը գրեթե ոչ մի կապ չի ունեցել հայ իրականության և ֆրանսահայ համայնքի հետ: Երկուսն էլ ունեցել են նույն արձատները (Ղարաբաղի Շուշի քաղաք), Աննա Բուդադյանը եղել է Ադամովի մոր մոտերին ընկերուհին, Արթուրը ընկերություն է արել Բուդադյանի որդու Ֆարադիի հետ: Այս առնչությունը կարող է բացատրվել ոչ միայն այս բարեկամական կապերով, այլև ստեղծագործական ընդհանուր հետաքրքրություններով:

Ներկայացնում ենք հայերեն թարգմանությունները: Նամակները ձեռագրից վերծանել ու թարգմանել է ֆրանսերեն լեզվի և գրականության մասնագետ Թագուհի Բլբուլյանը:

- 1 -

Սիրելի Տիկին Բուդադյան,

Ներողություն եմ խնդրում, որ Ձեր այնքան սիրալիք զանգից հետո Ձեզ հետ չեմ կապվել: Պարզապես հարկ եղավ հապշտապ կերպով մեկնել Գերմանիա՝ ռադիոյի և թատրոնի հետ կապված հարցերով: Հենց որ սեպտեմբերին վերադառնամ Ձեզ տեղյակ կպահեմ: Ձեզ մի մեծ ծառայություն եմ խնդրում մատուցել. բարի եղեք նամակը ստանալուն պես ինձ ուղարկել Ռիտայի¹⁴ հասցեն Համբուրգում: Մենք գնում ենք այնտեղ և ես շատ կուզենայի նրա մոտ երկու-երեք օր մնալ: Գրեք ինձ հետադարձ փոստով. փոստի գրասենյակում Ձեզ ամեն ինչ կբացատրեն: Մեկ անգամ ևս ներողություն եմ խնդրում Ձեզ այդ բանը խնդրելու համար, սակայն ես հասցեն կորցրել եմ և կուզեի այն ունենալ:

Կարծում եմ, որ իմ ներկայացումներից մեկը կամ երկուսը այս ժամանակամիջոցում կբեմադրվեն Գերմանայում: Եվ պետք է խոստովանել, որ շատ սիրեցի այս երկիրը, որը, սակայն, մի քիչ տխուր է: Դուք Փարիզ¹⁵ ւմ եք: Ֆարադն¹⁶ ինչպե՞ս է: Հաղորդեք՝ նրան իմ ողջույնները: Իսկ ինչո՞վ եք զբաղված Դուք: Ինչպե՞ս են գործերը հայկական թատրոնում: Սպասելով Ձեր պատասխանին՝ ես ևս մեկ անգամ ներողություն եմ խնդրում:

Արտագին բարևներով՝

Ձեր Արթուր:

- 2 -

Փարիզ, 24 հունվարի
1950

Սիրելի Տիկին Բուդադյան,

ես իրավունք եմ վերապահում այսքան լռությունից հետո Ձեզ մի քանի բա-

ժամորդագրական բյուլետեններ ուղարկել: Այդ բյուլետեններն իմ երկու ներկայացումների համար են, որոնք լույս կտեսնեն փետրվարի սկզբին: Եթե մեկ կամ երկու հոգի գտնեք, որոնք կցանկանան բաժանորդագրվել, ես ձեզ շատ երախտապարտ կլինեմ: Իսկ ինչ վերաբերում է ներկայացմանը, ահավոր ուշանում է, սակայն այժմ կարծում եմ, որ Անդրե ժիդի¹⁶ և այլոց օգնությամբ և աջակցությամբ, մենք կհաղթենք այդ դժվար պայքարում: Վիլարը¹⁷ սկզբունքորեն մարտապիլ ամիսներին պետք է բեմադրի իմ պիեսներից մեկը, իսկ մյուսը պետք է բեմադրվի մինչև ամառ՝ Գեթե Սոնպառնասում: Ես Ձեզ միշտ շատ լավ եմ հիշում և շատ երջանիկ կլինեի մեկ անգամ Ձեզ հետ հանդիպել և խոսել մեր համընդհանուր սիրո՝ թատրոնի մասին:

Մոտ օրերս ես կկապվեմ Ձեզ հետ:

Չեր Արթյուր

- 3 -

19 հոկտեմբերի, 1950

Սիրելի Տիկին Բուդաղյան,

Ես ներողություն եմ խնդրում անպարտաճանաչության համար: Ես պարտավոր էի Ձեզ գրել, որպեսզի շնորհակալություն հայտնեի ինձ ցուցաբերած Ձեր բարեհամ վերաբերմունքի համար: Հայերի անուններն ինձ շատ պետք եկան, եթե ոչ խմբակին անդամակցելու, ապա գոնե գրքի համար¹⁸ (ես ձեզ կպատմեմ նաև Դուկասովի¹⁹ հետ ունեցած իմ հանդիպման մասին):

Ես Ձեզ ավելի շուտ կգրեի, սակայն իսկապես շատ զբաղված էի: Երկար տարիների պայքարից հետո վերջապես նոյեմբեր ամսվա սկզբներին կբեմադրվի պիեսներիցս մեկը՝ «Երկու լուսնուտը», իսկ մյուսը կբեմադրվի նոյեմբերի 15-ին, Ելիսեյան դաշտերի ստուդիայում՝ ժամը 18:00-ին: Այն ինչ է, բայց... Մոտ օրերս ես կգանգահարեմ Ձեզ և կպատմեմ իմ ողիսականը:

Ընդունե՛ք, իմ սիրելի Տիկին Բուդաղյան, լավագույն ցանկություններիս հավաստիքը:

Չեր Արթյուր

Բարևներս հաղորդեք Ֆարադին (ճի՞շտ եմ գրում անունը):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ադամովի կենսագրական տվյալները մեծ մասամբ քաղել ենք հետևյալ աղբյուրներից՝ *Краткая литературная энциклопедия*, т. 1, Москва: 1962, 79-80. Սերովի՝ Մխիթարեան, «Ֆրանսերենով արտայայտուող հայ արուեստագետներ», Փարիզ, 1969, էջ 93-102:

2. Թիֆլիսում մնացած Եկատերինա Բահաթուրը մշտապես հետաքրքրվել է թոռներով: Այդ են վկայում Աննա Բուդաղյանի ֆոնդում պահվող տասնյակ նամակներ, որ ծեր թառե-

րագրուհին գրել է Փարիզում ապրող իր մտերիմ ընկերուհուն: Երան հատկապես հուզել է իր սիրելի Արտյուշայի ճակատագիրը, որին շատ քիչ է տեսել: Արդեն 1930-ին Բահաթուրը գրել է. «...իմ հրաշալի տղան... ակնհայտ է, որ նա գտել է իր ուղին: Երեխա ժամանակ նա դրսևորում էր իրեն որպես լուրջ, անկեղծ և համառ կամք ունեցող մեկը» (ԳԱԹ, Աննա Բուդաղյանի ֆոնդ, թիվ 41-III): Ավելի ուշ շրջանում գրված մեկ այլ նամակում Բահաթուրը գրել է արդեն գրողի դիրքերից. «Արտյուշայի մասի՞ն: Խոստովանում եմ, ես ոչ մի կերպ չէի կարող ենթադրել, որ նրա ծախ գրականությունն այդքան անառարկա է: Մեծ գրողը պետք է ժամանակի մարգարեն լինի: Ոչ միայն արտահայտել դարի բոլոր երազանքները, բոլոր ակնկալիքները, այլև իր ետևից տանել: Անգաղափար գրականությունը դեկադենտ է, անկաման գրականություն: Ցանկանում է կուսակցության շարքերն անցնել: Դա բարերար կազմի գրականության վրա, հստակ աշխարհայացք կձևավորի: Սակայն, իմ կարծիքով, աշխարհայացքը պետք է լինի կուսակցությունից դուրս, որը կարող է նեղացնել հորիզոնները: Շատ եմ ցավում, որ գրված եմ նրան տեսնելու հնարավորությունից» (նույն տեղում, թիվ 42-III):

3. Ալեխից Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր 6, Երևան, 1979, էջ 220, 224:

4. Լ. Ներսիսյան, Արթուր Աղամովի մի փորձը, «Սովետական արվեստ», 1962, թ. 10, էջ 46:

5. «Յոթանասունմեկի գարունը» թատերախաղի վերլուծությունը տես նախորդ հղումը, էջ 46-48:

6. Սերովյե Մխիթարյան, նույն տեղում, էջ 98:

7. Լուրբար Թիվդյան, Արթուր Աղամովի հետ, «Սովետական արվեստ», 1967, թ. 8, էջ 34:

8. Սերովյե Մխիթարեան, նույն տեղում, էջ 101-102:

9. Վիգեն Իսահակյան, «Դայրոս», Երևան, 2000, էջ 53-54:

10. Աննա Բուդաղյանի կենսագրական տվյալները վերցրել ենք Գառնիկ Ստեփանյանի «Ավանդակներ սփյուռքահայ թատրոնի պատմության, I, Ֆրանսահայ թատրոն» (Երևան, 1982, էջ 86-99):

11. Տե՛ս, օրինակ, Աննա Բուդաղյան, Յովհաննես Աբելեան, «Անահիտ», հունվար-մարտ, 1937:

12. Վահրամ Փափազյան, Երկեր 5 հատորով, հատոր 2, Երևան, 1981, էջ 314-315:

13. Տե՛ս «Ձարթօնք» թերթ, Պէլոուք, 3.02.1954:

14. Ռիտա, անհայտ անձնավորություն:

15. Ֆարադ, Աննա Բուդաղյանի որդին:

16. Անդրե ժիլ (1869–1951), ֆրանսիացի գրող:

17. Ժան Վիլար (1912–1971), ֆրանսիացի ռեժիսոր և դերասան:

18. Ցավոք, չկարողացանք պարզել, թե ինչ խմբակի և գրքի մասին է խոսքը:

19. Դժվար է ասել, թե Ղուկասովներից ում է նկատի ունեցել Աղամովը. 1950-ականներից Փարիզում ապրել են ռուսերեն «Վոզոժդեննիե» թերթի հրատարակիչ Աբրամ Ղուկասովը (Արշակ Ղուկասյան) և արդյունաբերող ժոզեֆ Ղուկասովը (Ղովսեփ Ղուկասյան, 1901–1975):

Պատարակության պատրաստեց՝
ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ